ԴՊՐՈՑԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՍԱՏՐՅԱՆ Լ. Թ.

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ

ԱՍԱՏՐՅԱՆ Մ. Ա.

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

Անձի կրթության և դաստիարակության արդյունավետ իրականացման կարևորագույն գործոնի՝ բարենպաստ սոցիալ-մշակութային միջավայրի ապահովման հիմնահարցը Հայաստանում դիտարկվել է դեռևս Տիգրան Մեծի օրոք: Փորձելով հռոմեական կրթամշակութային քաղաքականության դեմ հակակշիռ ստեղծել և այդ ոլորտներում առաջ անցնել հռոմեացիներից՝ Տիգրան Մեծը նախատեսել էր, որ իր նորակառույց մայրաքաղաք Տիգրանակերտը պետք է դառնար ոչ միայն նորաստեղծ պետության քաղաքական, այլև հելլենիստական աշխարհի, գիտության, գրականության, արվեստների խոշորագույն կենտրոն: Հետևաբար, նա խորապես գիտակցում էր, որ դա կարելի է իրականացնել միայն բարձր մակարդակով կազմակերպված կրթության միջոցով: Այդ նպատակի իրականացման համար նա Տիգրանակերտ է տեղափոխում իր կայսրության հելլենիստական կենտրոնների՝ Կապադովկիայի, Կիլիկիայի, Սիրիայի, Կորդովայի բնակչությանը՝ այն դարձնելով դասական հելլենիստական քաղաք իր նիստուկացով, օրենքներով, թատրոնով, կրթական հաստատություններով, որտեղ առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում հելլենիստական կրթության, գիտության, արվեստների, փիլիսոփայության, գրականության տարածմանը: Որպեսզի կրթամշակութային պատշաճ միջավայր ստեղծվի, Տիգրան Մեծը մի կողմից ապաստարան էր տալիս և մեծ աջակցություն էր ցուցաբերում Հռոմի կողմից հալածվող մտավորականության ներկայացուցիչներին, մյուս կողմից՝ լուծում էր հայ ազնվականության հելլենիստական կրթության և դաստիարակության խնդիրը: Այնուհետ հելենիստական մշակույթի և կրթության ավանդույթները շարունակվեցին նաև հայ Արշակունիների ժամանակաշրջանում [7, էջ 61]՝ մինչև հայ գրերի ստեղծումը:

405 թվականին՝ հայոց այբուբենի ստեղծումից հետո, Մեսրոպ Մաշտոցը ձեռնամուխ է լինում Աստվածաշնչի թարգմանությանն ու հայալեզու հայագիր դպրոցների ստեղծմանը: Հայաստանի երկու մասերում և Արցախում հայագիր դպրոցների բացումը հայ ժողովրդի համար կրթամշակութային նշանակալի իրադարձություն էր: Մեսրոպ Մաշտոցը ոչ միայն հիմնադրեց հայագիր դպրոցներ, այլև կարգավորեց դրանց գործունեությունն ու կառավարման

կարգը, սահմանեց այդ դպրոցների կրթության բովանդակությունը, ուսուցման գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար մշակեց ուսումնական ծրագրեր ու մեթոդներ՝ միևնույն ժամանակ ձեռնամուխ լինելով դասագրքերի ստեղծմանը և ուսուցչական կադրերի պատրաստմանը:

Նորաբաց հայագիր դպրոցները դարձան ոչ միայն կրթական, այլև սոցիալ-մշակութային հզոր կենտրոններ. այստեղ թարգմանվում էին եկեղեցական-կրոնական գրականության նմուշներ, ստեղծվում էին պատմագրական, գեղարվեստական գրականության, գրչության և զարդարվեստի մեծարժեք գործեր, դրվում էին նաև սոցիալական գործընկերության հիմքերը: Հայաստանում գործող դպրոցներն ունեցել են սոցիալական գործընկերներ՝ թագավորական ընտանիք, իշխաններ, կաթողիկոսարան, առանձին մեկենասներ և բարեգործներ, պետական և համայնքային մարմիններ: Հայոց թագավորական և իշխանական տները, կաթողիկոսարանները հովանավորում էին դպրոցաշինության գործը, արվեստի, գրականության, գիտությունների զարգացման համար նրանց կողմից ստեղծվում էին պայմաններ, հատկացվում էին գումարներ, տրվում էին պատվերներ: Այդպիսի սոցիալական գործընկերության վառ օրինակներ էին Վռամշապուհ արքան, Պապ թագավորը, Վաչագան թագավորը Արցախում, Հեթում Ա թագավորը և նրա եղբայրները, Ներսես Շնորհալին, Կոստանդին Կաթողիկոսը, որոնց օրոք, ժամանակագիրների վկայությամբ, զարգանում էին դպրոցները, ստեղծվում էին գրչության, կրթամշակութային խոշորագույն կենտրոններ, իսկ «մեր գեղագրական և մանրանկարչական արվեստներն իրենց ոսկեդարն էին ապրում»[2, էջ 13]:

Հայաստանի կրթական հաստատություններում սոցիալ-մշակութային միջավայրի զարգացման երկրորդ փուլը հայկական վերածննդի ժամանակաշրջանն էր (10-14-րդ դարեր): Միջնադարյան հայկական համալսարաններում, բարձր դպրոցներում կացարաններ, սոցիալական պայմաններ էին ստեղծվում Հայաստանի տարբեր գավառներից եկած ուսանողների համար: Այդ ժամանակաշրջանում որպես սոցիալական գործընկերներ աչքի են ընկել Հայաստանում՝ Բագրատունին, Կիլիկիայում՝ Հեթումյան թագավորական, ինչպես նաև Պահլավունի, Պռոշյան-Խաղբակյան, Օրբելյան իշխանական տները, որոնք հովանավորել և աջակցել են զարգացնելու կրթական գործը, ընդլայնելու դպրոցների ցանցը և դրանք դարձնելու իրենց ժամանակից շատ առաջ անցած սոցիալ-մշակութային կրթական հզոր կենտրոններ: Այսպես, օրինակ, պատմիչների վկայությամբ՝ Հռոմկլայում զարգացման բարձր մակարդակի էին հասել գրչության և մանրանկարչության դպրոցները, որոնք հովանավորում էին Ներսես Շնորհալին, Կոստանդին Կաթողիկոսը: Վերջինս 1243 թվականին Սսի ժողովում, որին, ի դեպ, մասնակցում էր նաև Վարդան Արևելցին, ի թիվս եկեղեցական կյանքի

բարեկարգման հարցերի՝ քննարկեցին նաև կրթական գործի և դպրոցների զարգացման հարցերը՝ սահմանելով որոշակի կանոններ դրանց գործունեության բովանդակության վերաբերյալ. «Գրոց դասասացք բազմաց վկայութեամբ լիցի, որ լինին գիտունք եւ ամենայն գրոց վարժք եւ տեղեակք եւ փորձ ամենայնիւ, նոյնպէս եւ գրոց աշակերտքն ընտրութեամբ նորին եւ առաւել փորձիւ, եւ վկայութեամբ կատարելոց»[3, էջ 162-174]:

Այդ ժամանկաշրջանի կրթական բարենորոգումները Հայաստանում մեծապես կապված են խոշորագույն փիլիսոփա, բնագետ, քերականագետ, մանկավարժ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անվան հետ: Գրիգոր Մագիստրոսը կրթության, դպրոցաշինության գործի կազմակերպման և կրթության կառավարման մեծ բարենորոգիչ էր: Բարձր գնահատելով կրթության կարևորությունը՝ նա հասարակության առաջընթացի ապահովումը կապում էր դպրոցական համակարգի զարգացման և դրա կառավարման գործընթացի կատարելագործման հետ: Նա տեսականորեն հիմնավորեց դպրոցի բարեփոխման և կրթության բովանդակության մեջ բնագիտական և մաթեմատիկական առարկաների ներմուծման անհրաժեշտությունը, նախագծեց և մշակեց ուսումնական ծրագրերի, պլանների ու առարկաների բովանդակությունը: Այնուհետև հիմնավորեց դպրոցները գիտամեթոդական և ուսումնակրթական համապատասխան գրականությամբ ապահովելու անհրաժեշտությունը: Այսինքն՝ Գրիգոր Մագիստրոսը կրթության համակարգի կատարելագործումն ու առաջընթացն անմիջականորեն կապում էր դպրոցում սոցիալ-մշակութային կրթական միջավայրի ապահովման ու զարգացման հետ:

Նպատակադրելով կարգավորել կրթադաստիարակչական աշխատանքներն ըստ տարիների ու դպրոցի աստիճանների՝ Մագիստրոսը սահմանել է հայկական դպրոցներում առարկաների ուսումնասիրման հաջորդականությունը, ճշգրտել դրանց ցանկն ու բովանդակությունը:

Կրթական հաստատության սոցիալ-մշակութային միջավայրի նախագծման և կառավարման հարցերը բարձր մակարդակի են հասել վաղ ժամանակներից գործող Տաթևի վանքի բարձր դպրոցում՝ Հովհան Որոտնեցու կառավարման տարիներին: Այն կարճ ժամանակում վերածվում է համալսարանի՝ դառնալով միջնադարյան Հայաստանի գիտակրթական, մշակութային, լուսավորչական խոշորագույն կենտրոններից մեկը:

Հովհան Որոտնեցին ոչ միայն ականավոր մանկավարժ-գիտնական էր, այլև կրթության գործի և դպրոցի մեծ բարենորոգիչ: Նա հայ նոր դպրոցի ստեղծման գիտական հիմունքների, բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների, արտաուսումնական դաստիարակչական աշխատանքների կազմակերպման, կրթության կառավարման սկզբունքների և գործառույթների տեսական հիմնավորողն ու կյանքի կոչողն էր: Հիմնվելով Գրիգոր

Մագիստրոսի առաջարկած դպրոցի բարենորոգման ծրագրի վրա՝ Որոտնեցին որոշակիորեն կարգավորեց, վերակառուցեց դպրոցական գործը՝ ըստ կրթության աստիճանների և յուրաքանչյուր աստիճանում ուսումնասիրվելիք առարկաների, ըստ որոշակի տարիքային խմբերի և գիտելիքների մակարդակի ուսուցման կազմակերպման, ըստ տարվա որոշակի ժամանակի աշակերտների ընդունելության: Նա կարևորեց սոցիալ-մշակութային միջավայրի դերը սովորողների կրթության և դաստիարակության, հոգևոր ոլորտի ձևավորման գործում և դրա համար իր կառավարած Տաթևի համալսարանում խթանեց սովորողների արտաուսումնական մշակութային գործունեությունը, պարտադիր դարձրեց աշխարհիկ, բնական գիտությունների և այլ առարկաների ուսուցումը՝ ըստ նրանց ուսուցման որոշակի աստիճանականության, մշակեց և ներդրեց ուսուցման ու դաստիարակության նոր մեթոդներ ու ձևեր, սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման, ընթացիկ ու ավարտական քննությունների համակարգ:

Հովհան Որոտնեցին շվեյցարացի մանկավարժ Պեստալոցուց դեռևս 400 տարի առաջ ուսուցումը համադրեց աշխատանքային դաստիարակությանը՝ դպրոցական և արտաուսումնական ուսուցման ծրագրերում ներմուծելով և օրինականացնելով կիրառական-գործնական գիտելիքներ ուսուցանող առարկաներ՝ մագաղաթամշակություն, գրքակազմություն, ինչպես նաև գրչության, ծաղկման, փորագրական, նախշազարդման արվեստներ ու արհեստներ:

Հովհան Որոտնեցու բարենորոգչական, լուսավորական գործունեությունը հսկայական նշանակություն ունեցավ հայ դպրոցի կառավարման, բովանդակության կատարելագործման և գիտամանկավարժական մտքի հետագա զարգացման համար՝ նոր մակարդակի բարձրացնելով հայ կրթական գործն ու մշակույթը:

Հայկական դպրոցների բարենորոգման, դրանցում սոցիալ-մշակութային կրթական միջավայրի ստեղծման հարցերն արտացոլվել են նաև Խ. Աբովյանի մանկավարժական հայացքներում:

Դպրոցական գործի նորոգման, բարեփոխման և նախագծման հարցերը մեծ տեղ են գտել նաև 19-րդ դարի արևմտահայ խոշորագույն մանկավարժ Մատթեոս Մամուրյանի մանկավարծական հայացքներում: Նրա կանխատեսումները, իր ղեկավարած վարժարաններում նորամուծություններն, մանկավարժական հայացքներն անգամ այսօր այնքան արդիական են , որ թվում է, թե նա մեր ժամանակակիցն է և ինչ գրել է, այսօրվա համար է գրել [1, էջ 403]: Հ. Աճառյանի բնութագրմամբ՝ Մատթեոս Մամուրյանը դպրոցի ու լուսավորության «համբավավոր կազմակերպիչ էր», «մանկավարժության ականավոր տեսաբան» [6]:

Ըստ Մ. Մամուրյանի՝ ազգի առաջընթացը, զարգացումը իրագործելի է միայն կրթությամբ, գրքի, գրականության տարածմամբ. լոսավորություն, պայքար և ազատություն, այդ ամենի օջախը դպրոցն է, այն պետք է վերակառուցել, վերափոխել, հրաժարվել հնից և դնել նորի հաստատուն հիմքերը. նորագույն վարժարաններ, պլան-ծրագրեր, ձեռնարկ-դասագրքեր, որակյալ ռաուցիչներ...: Հենց այս դրույթների համաձայն էլ նա իրականացնում էր իր կառավարչական գործունեությունը. նրա ղեկավարած դպրոցները ժամանակի առաջավոր կրթօջախներից են եղել, նրա մշակած ուսումնական ծրագրերում, ի տարբերություն շատ վարժարանների, առաջնային առարկաներ են համարվել բնական-ռեալական գիտելիքները, գործնական պարապմունքները (աշխատանքի, տնարարության ուսուցումը), ֆիզիկական դաստիարակությունը (նույնիսկ «սպարտականի» մակարդակով, ընդ որում թե՛ տղաների, թե՛ աղջիկների համար): Նա ամեն կերպ ջանում էր դպրոցը մերձեցնել կյանքին: Մ. Մամուրյանը կարևորում էր սոցիալական բարենպաստ միջավայրի դերը երեխայի դաստիարակության ու զարգացման գործում և փրձում էր իր ղեկավարած դպրոցներում հնարավորինս ապահովել դրանք՝ այդ գործին մասնակից դարձնելով հայ բարերարներին:

Դպրոցական գործի խոշորագույն նախագծող ու կազմակերպիչ էր Հովհաննես Հինդլյանը: Իր հիմնած «Նոր դպրոց» կրթօջախը նա դարձրեց իր մանկավարժական հայացքների իրականացման և կառավարչական կարողությունների դրսևորման փորձակենտրոնը: Հ. Հինդլյանի մանկավարժական հայացքների առանցքը անձնակենտրոն կրթության հարացույցն է, որի էությունը սովորողի անձի արժևորումն է, նրա ոչ միայն մտավոր, այլև զգայական, սոցիալական զարգացումը [4, 5]: Այս տեսանկյունից է նա մոտենում դպրոցների բարեկարգման, կառավարման համակարգի վերակառուցման և դրանցում սովորողների համար սոցիալ-մշակութային բարենպաստ կրթական միջավայրի ապահովման հարցերին:

Այսպիսով՝ Հայաստանում դպրոցի սոցիալ-մշակութային միջավայրի նախագծման և կառավարման հիմնահարցը դրվել է դեռևս շատ վաղ ժամանակներից: Պատմական տարբեր ժամանակահատվածներում հայ մանկավարժները կարևորել են կրթական գործի կազմակերպման, կրթության բովանդակության նախագծման, դպրոցի կառավարման, դրանցում սոցիալ-մշակութային միջավայրի ապահովման հարցերը որպես անձի կրթության և դաստիարակության կարևորագույն գործոնի և իրենց կառավարած դպրոցներում իրականացրել դրանք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Լ., Ասատրյան Զ., Հակոբյան Ա., Սաֆարյան Ն., Մանկավարժության պատմություն, -Եր.: Տիգրան Մեծ հրատ., 2020:

2. Գարեգին արքեպիսկոպոս Յովսէփեան, Նյութեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պրակ Բ, ՆԻԻ Եորք, 1943:

3. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961:

4. Հինդլեան Յ.Թ., Անկեղծ էջեր, Ա հատոր, Կ.Պոլիս, տպ.-Յ.Մատթէոսեան, 1913:

5. Հինդլեան Յ.Թ., Անկեղծ էջեր, Բ հատոր, Կ.Պոլիս, տպ.- Յ.Մատթէոսեան, 1913:

6. Շավարշյան Ա.Մ., Հայ մանկավարժներ, գիրք Բ, -Եր.: Հայպետուսմանկհրատ, 1961:

7. Мирумян К. А. Антология армянской педагогической мысли. Ереван, 2019.

THE PROBLEM OF DESIGNING AND MANAGING THE SOCIO-CULTURAL ENVIRONMENT OF THE SCHOOL IN THE HISTORY OF PEDAGOGICAL THOUGHT IN ARMENIA

The article deals with the design of the socio-cultural environment and school management in the history of pedagogical thought in Armenia. The views of prominent Armenian teachers of the organization of educational work, design of the content of education and school management in different historical periods are presented.

***Keywords**: school, education, upbringing, socio-cultural environment, design, management, educational and cultural policy.*